ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք,
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԶՈՒՄ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322)
64109 , bazum.lori@mta.gov.am

N 016/353
21 հոկտեմբեր 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Բազում համայնքի ղեկավարի թիվ 69-Ա որոշումը:

Առդիր՝ 1 էջ

Недействительная подпись

X

Սրբուհի Հարությունյան
Համայնքի ղեկավար

ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 69-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Գ. Վեքիլյան>> ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագիծը, շինության բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006 թ-ի մայիսի 18-թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006 թ-ի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա ենթակետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Ճանաչել Բազում համայնքի սեփականության իրավունքը ինքնակամ կառուցված, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 35,2 քմ արտաքին մակերեսով անասնաշենքի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի թվին չդասվող 0,16909 հա 06-023-0235-0008 ծածկագրի վարելահողի նկատմամբ՝ համաձայն հավելվածի:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված վարելահողի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Դիմել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե սույն որոշման առաջին կետում նշված ինքնակամ կառուցված անասնաշենքի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված անասնագոմի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին անասնագոմը և վարելահողը ուղղակի վաճառքի ձևով ստանալու վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ